# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի 'Արծվանիստի միջնակարգ դպրոց' ՊՈԱԿ-ի դասվարի (20 դասաժամ) տեղի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստային փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակած հարցաշարերի: Հարցազրույցի փուլի հարցաշարերը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Դիմում՝ (Ձև1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4 'Հանրակրթության մասին' ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույքի պատճեն (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատանքի իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ-ում արրական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9.Որակավորման տարրակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթղեր:

Տնօրենի կաղմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրակները համեմատում է պատճեննրի հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետըի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի հունվարի 19-ից , ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջի հրապարակման օրվանից մինչև փետրվարի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի փետրվարի 04-ին , ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ գ. Արծվանիստ. Հասցեն 16 Փ. 10/Ճ/

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093396373 հեռախոսահամարով: